«Այբ» ավագ դպրոց

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ **2023 թ., ապրիլ**
Տևողություն՝ **1 ժամ 15 րոպե**
Հավելյալ նյութ՝ *Պատասխանների գրքույկ*

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Անհրաժեշտ է հետևել *Պատասխանների գրքույկի* կազմին գրված ցուցումներին:
Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:
Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Յուրաքանչյուր հարցի հնարավոր առավելագույն միավորը նշված է հարցի վերջում՝ աջ կողմում:
Հարցերի միավորների ընդհանուր քանակը **32** է:

Այս փաստաթուղթը բաղկացած է 4 տպագիր էջից:

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (20 ՄԻԱՎՈՐ)

Ուշադրությո՛ւն. հայոց պատմություն բաժնում ներառված է 4 թեմա՝ մեկական թեմա հին, միջին, նոր և նորագույն դարերից: Յուրաքանչյուր թեմա պարունակում է երկու հարց: Ընտրե՛ք թեմաներից ցանկացած երկուսը և պատասխանե՛ք հարցերին:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ

ԹԵՄԱ 1. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՈՒՄԸ ՏԵՐՈՒԹՅԱՆ. ՏԻԳՐԱՆ II (10 ՄԻԱՎՈՐ)

1. Ի՞նչ կետեր էր պարունակում պոնտական արքա Միհրդատ VI Եվպատորի և Մեծ Հայքի արքա Տիգրան Մեծի միջև կնքված պայմանագիրը (հայ-պոնտական պայմանագիրը): Ինչո՞ւ Տիգրան Մեծը կնքեց այդ պայմանագիրը: Ի՞նչ կարող էր այն տալ հայոց արքային իր հետագա նպատակները և քայլերն իրականացնելիս:

Տիգրան Մեծը, Ք. ա. 95 թվականին գահ բարձրանալով, շարունակեց Արտաշես I-ինի հայկական տարածքների միավորման քաղաքականությունը: Ծոփէի և Կորդուքի տարածքները Մեծ Հայքին միացնելուց հետո հաջորդ հայկական տարածքը, որը պետք է միացվեր, Փոքր Հայքն էր: Այս տարածքը Ք. ա. 112 թվականին միացվել էր Մեծ Հայքի հարևանությամբ գտնվող Պոնտական թագավորությանը:

Տիգրան Մեծի քաղաքական ծրագրերի մեջ էր մտնում նվաճումներ իրականացնել նաև Մեծ Հայքի սահմաններից դուրս: Այս պարագայում, Տիգրանը նախընտրեց դաշնակցել Պոնտոսի արքա Միհրդատ VI Եվպատորի հետ, քան Փոքր Հայքի համար ներքաշվել տարածաշրջանային պատերազմի մեջ: Փոքր Հայքի միավորմանը հիմնախնդիրը մղվեց հետին պլան:

Ք. ա. 94 թվականին մայրաքաղաք Արտաշատում կնքվեց հայ-պոնտական պայմանագիրը, որը պայմանավորեց Տիգրանի հետագա նվաճողական քաղաքականությունը:

Ըստ այս պայմանագրի՝

- Կողմերը տարածաշրջանը բաժանեցին ազդեցության գոտիների: Արևմուտքում գործունեության ազատություն էր ստանում Պոնտական թագավորությունը, իսկ հյուսիսում, հարավում և արևելքում՝ Մեծ Հայքի թագավորությունը:
- Հայ-պոնտական միացյալ ուժերը գրավելու էին Փոքր Ասիայում գտնվող Կապադովկիան: Կապադովկիայի տարածքը անցնելու էր Պոնտական թագավորությանը, իսկ բնակչությունը և շարժական գույքը՝ Մեծ Հայքին:
- Պայմանագիրը ամրապնդվեց Հայոց արքայի և Միհրդատի դստեր Կլեոպատրայի ամուսնությամբ:

Այս պայամանագրի համաձայն՝ Ք. ա. 93 թվականին հայ-պոնտական ուժերը ներխուժեցին Կապադովկիա: Կապադովկիայի նվաճումից հետո, երբ Տիգրանը Մեծը վստահ էր, որ արևմուտքում Մեծ Հայքի թիկունքն ապահով է, իր զորքերը արդեն Ք. ա. 88 թվականին ուղղեց Պարթևական թագավորություն՝ գրավելով մայրաքաղաք Էկբատանը: Պարթևական կողմի ընդունեց Մեծ Հայքի գերիշխանությունը, Մեծ Հայքին վերադարձվեցին հայկական տարածքները, Տիգրանին շնորհվեց «արքայից արքա» տիտղոսը:

Հայ-պոնտական պայմանագիրը Տիգրան Մեծին հնարավորություն տվեց իր նվաճումներն իրականացնել Հայկական լեռնաշխարհի արևելքում և հարավում, որի արդյունքում Մեծ Հայքի թագավորությունը իր դիրքերն ամրապնդեց Արևմտյան Եփրատի հովտում, իր սահմանները հասցրեց Պարսից ծոց: Սա իր հերթին հիմք դարձավ հետագայում Սելևկյան թագավորության և Միջերկրական ծովի արևելքի նվաճման համար:

2. Ինչո՞ւ Տիգրան Մեծը պատերազմը չվարեց Պոմպեոսի հետ, այլ գերադասեց նրա հետ կնքել Արտաշատի պայմանագիրը: Բացատրե՛ք Արտաշատի պայմանագրի մեկ դրական և մեկ բացասական հետևանք Մեծ Հայքի թագավորության համար:

Մերձավոր Արևելքի համար պայքար մղող պետություններից Ք. ա. 69 թվականի դրությամբ բախվեցին Մեծ Հայքի թագավորությունը և Հռոմեական Հանրապետությունը: Ռազմական բախման առիթը դարձավ Հռոմի թշնամի Միհրդատ Եվպատորի՝ Մեծ Հայքում քաղաքական ապաստան ստանալը: Հայ-հռոմեական պատերազմի առաջին փուլում հաղթող կողմ դարձաբ Մեծ Հայքը: Հայ-հռոմեական առաջին պատերազմի արդյունքում Տիգրանը 10 հազարանոց զորամասով կարողացել էր նաև Պոնտական թագավորություն հետ վերադարձնել Միհրդատ Եվպատորին: Հայկական բանակը կարողացել էր դուրս մղել հռոմեական բանակին Մեծ Հայքի սահմաններից՝ Ք. ա. 68 սեպտեմբերին մղելով վճռական Արածանիի ճակատամարտը:

Ք. ա. 66 թվականին սկսվեց հայ-հռոմեական պատերազմի երկրորդ փուլը, որը ընթացավ առանց ռազմական գործողությունների: Տիգրան Մեծը նախընտրեց չպատերազմել արևելք ուղարկված Հռոմի նոր զորավար Գնեոս Պոմպեոսի դեմ: Մեծ Հայքի արքայի նման որոշում կայացնելու համար կային մի շարք ներքին և արտաքին նախադրյալներ՝

Ներքին

- Հայոց ավազանու մոտ առաջացել էին դժգոհություններ թագավորության հետագա քաղաքական քայլերի տեսլականի վերաբերյալ, քանի որ հայոց թագավորության ավազանին հոգնել էր երկարատև պատերազմներից և պատրաստ չէր անորոշ ժամանակով շարունակել պատերազմը՝ պայքար մղելով Հռոմի և Պարթևստանի դեմ:

Արտաքին

- Մեծ Հայքի համար ձևավորվել էր ոչ բարենպաստ արտաքին քաղաքական իրավիճակ: Փաստացի խզվել էր հայ-պոնտական դաշինքը, և Մեծ Հայքը մնացել էր միայնակ երկու թշնամիների միջև. Գնեոս Պոմպեոսից պարտություն էր կրել Միհրդատ Եվպատորը:
- Կնքվել էր հռոմեա-պարթևական պայմանագիր, ըստ որի՝ պարթևները հարձակվեցին Մեծ Հայքի վրա:

Ներքին և արտաքին այս հիմնախնդիրները հաշվի առնելով՝ Տիգրան Մեծը ստիպված էր գնալ զիջումների և խաղաղության հաստատման: Ք. ա. 66 թվականին մայրաքաղաք Արտաշատում կնքվեց հայ-հռոմեական հաշտության պայմանգիրը, որը ունեցավ և՛ դրական, և՛ բացասական հետևաքներ:

Դրական

- Մեծ Հայքը պահպանում էր իր քաղաքական անկախությունը և հռչակվում էր «Հռոմեական ժողովրդի դաշնակից և բարեկամ»:

Բացասական

- Մեծ Հայքը, հօգուտ Հռոմի, հրաժարվեց իր բոլոր նվաճումներից:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ

ԹԵՄԱ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ (10 ՄԻԱՎՈՐ)

1. Ինչու՞ 11-րդ դարի վերջին Կիլիկիայում ձևավորվեց հայկական պետականություն: Բացատրե՛ք Կիլիկիայում պետականության ձևավորման առնվազն մեկ պատճառ:

11-րդ դարում Բագրատունիների Հայոց թագավորության անկումից հետո հայկական պետականություն ձևավորվեց Միջերկրական ծովի հյուսիսարևելյան շրջաններում: Կիլիկիա տարածաշրջանը աշխարհագրորեն բաժանված էր երեք շրջանների՝ Լեռնային, Դաշտային և Քարուտ: Հայկական առաջին իշխանությունները ձևավորվեցին Լեռային Կիլիկիայի տարածաշրջանում: Կիլիկիա տարածաշրջանում հայկական պետականության ձևավորման համար կային մի շարք ներքին և արտաքին պատճառներ:

Կիլիկիան հայերին ծանոթ է եղել հին ժամանակներից: Տիգրան Մեծի նվաճումներից հետո հայերը սկսեցին բնակվել այստեղ: Հայերը Կիլիկիայում 10-րդ դարում արդեն մեծ թիվ էր կազմում: Բագրատունիների թագավորության անկումից հետո Կիլիկիա տեղափոխվեին նաև Արծրունիների և Բագրատունիների տոհմի ներկայացուցիչները և այլ իշխանական տներ (Ապլղարիպ Արծրունի, Գագիկ Բագրատունի): Այս ժամանակաշրջանում Կիլիկիայում և Միջերկրականի արևելյան տարածքներում հայերն ունեին իրենց սոցիալական միջավայրը, հայոց եկեղեցու թեմեր: Այս տարածաշրջանի հայ բնակչությունը հիմնականում զբաղվում էր արհեստներով և առևտրով և հանդիսանում էր Արևելյան Միջերկրականի կարևոր տնտեսական գործոններից:

<u>ԿԱՄ</u>

Կիլիկիայում հայկական պետականությունների ձևավորմանը նպաստեց 1071-ին Մանազկերտի ճակատամարտը, որըեղ Բյուզանդական կայսրությունը ջախջախիչ պարտություն կրեց տարածաշրջան ներխուժած սելջուկ-թուքերից: Արդեն 1072-ից սկսած Լեռնային Կիլիկիայում սկսեցին ձևավորվել հայկական մանր պետական կազմավորումներ: Այդ պետական կազմավորումներից հիշատակելի են Փիլարտոս Վարաժնունու (1072-1090), Գող Վասիլի (1082-1117), Ռուբեն իշխանի հիմնադրած (1080-1198-1375) իշխանությունները, որոնցից ամենակենսունակը Ռուբենյան իշխանությունն էր:

2. Ինչպե՞ս Լևոն Բ իշխանին հաջողվեց Կիլիկիայի հայկական իշխանությունը վերածել թագավորության: Ներկայացրե՛ք իշխանի երկու դիվանագիտական քայլ Կիլիկիան թագավորության վերածելու ուղղությամբ:

Լևոն Բ իշխանին (1187-1198/ 1198-1219) իր կառավարման ընթացքում հնարավորություն ընձեռվեց ճկուն դիվանագիտական քայլերի արդյունքում Կիլիկիայի հայկական իշխանությունը վերածել թագավորության: Կիլիկիան հայկական թագավորության վերածելու համար կային մի շարք նախադրյալներ:

12-րդ դարի վերջի դրությամբ Կիլկիայի հայկակն իշխանությունը Մերձավոր Արևելքում հզոր քրիստոնեկան պետությունն էր: Դրա փոխարեն Միջերկրականի արևելքում գտնվող Խաչակրաց պետությունները գտնվում էին թուլացած վիճակում, քանի որ ենթարկվում էին Եգիպտոսի Այուբյան սուլթանության ռազմական հարձակումներին: Թուլացած էին նաև Կիլիկիայի հյուսիսում գտնվող Իկոնիայի սելջուկյան սուլթանությունը և Բյուզանդական կայսրությունը:

Հաշվի առնելով արտաքին քաղաքական բարենպատ իրավիճակը՝ Լևոն իշխանը դիվանագիտական քայլեր կատարեց արքայական թագ ստանալու համար:

<u>Առաջին քայլը</u> խաչակրաց երրորդ արշավանքը գլխավորող Սրբազան Հռոմեական կայսրության կայսր Ֆրիդրիխ Շիկամորուսի հետ համագործակցելն էր: Լևոնը առաջարկեց իր օգնությունը 1189-ին սկսված արշավանքին, որի փոխարեն թագ խնդրեց Ֆրիդրիխ Շիկամորուսից: Կայսրը, սակայն, խեղդվեց Կիլիկիայի սահմանային Սելևկիա գետում, որով և Լևոնի թագ ստանալուն ուղղված առաջին քայլը տապալվեց:

Երկրորդ քայլը Լևոն իշխանը կատարեց Խաչակրաց պետությունների ուղղությամբ։ Լևոն իշխանը նպատակ ուներ ստեղծել հայ-խաչակրաց միասնական պետություն, որի արդյունքում հույս ուներ կաթոլիկ աշխարհի առաջնորդ Հռոմի պապից թագ ստանալ։ Կիլիկիայի՝ թագավորության վերածվելուն պետք է նպաստեր Սիս քաղաքում 1194-ին կնքված հայ-խաչակրաց պայմանագիրը Լևոնի և Անտիոքի իշխանի միջև։ Պայմանագրի կնքման համար կային այլ նախադրյալներ ևս. Անտիոքի իշխանը ծրագրել էր ձերբակալել Լևոն իշխանին։ Նախօրոք տեղեկանալով խաբեության մասին, Լևոնը Բոհեմունդին հրավիրեց Սիս և ձերբակալեց։ Արդյունքում կնքվեց Սիս քաղաքի պայմանագիրը, ըստ որի՝ Կիլիկիայի հայկական իշխանության և Անտիոքի դքսության միջը խնամիական կապեր հաստատվեցին։

Արդյունքում՝ Լևոն իշխանի դիվանագիտական քայլերը նպատեցին նրան, որ 1197-ին Սրբազան Հռոմեական կայսրության կայսր Հենրի VI-ը թագ ուղարկեց Լևոնին։

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆՈՐ ԴԱՐԵՐՈՒՄ

ԹԵՄԱ 3. ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ (10 ՄԻԱՎՈՐ)

1. Հայերին վերաբերող ի՞նչ հոդվածներ կային Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերում։ Բացատրե՛ք Հայկական հարցի միջազգայնացման մեկ հետևանք։

Սան Ստեֆանոյի պայմանագիր։ 19-րդ դարի վերջին ռուս-թուրքական հերթական պատերազմն ավարտվեց ռուսական կայսրության հաղթանակով։ Պատերազմը ընթացել էր երկու ճակատներում՝ Բալկանյան և Կովկասյան։ Ռուսական բանակը տարածքային նվաճումներ էր ապահովել երկու ռազմաճակատներում էլ։

1878 փետրվարի 19-ին Կոստանդնուպոլսի արվարձան Սան Ստեֆանոյում կնքվեց ռուս-թուրքական հաշտության պայմանագիրը։

Այս պայմանագրում կային հայերին վերաբերվող մի քանի հոդվածներ։ Նախ՝ այս պայմանագրով Ռուսական կայսրությանն էին Արևմտյան Հայաստանի մի շարք տարածքներ՝

- Կարսը՝ իր շրջակա գավառներով,
- Բայազետը,
- Ալաշկերտը,
    - Ռուսական կայսրության կողմից գրավված ***Կարինը և Բասենը վերադարձվում էին*** Օսմանյան կայսրությանը։

Այս պայմանագրի ևս մի քանի հոդվածներ վերաբերվում էին հայերին։ Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով միջազգային դիվանագիտության քննարկման առարկա դարձավ Հայկական հարցը։ Այս հոդվածով Օսմանյան կառավարությունը պարտավորվում էր Օսմանյան կայսրությանը վերադարձվող հայկական գավառներում իրականացնել բարեփոխումներ, պաշտպանել քրդական և չերքեզական հարձակումներից։ Ռուսական զորքերը հայկական տարածքներում պետք է մնային վեց ամիս և վերահսկեին բարեփոխումների իրականացումը։ 16-րդ հոդվածում հայկական տարածքները նշելու համար առաջին անգամ օգտագործվեց «Հայաստան» անվանումը։

Բեռլինի պայմանագիր։ Ռուս-թուրքական Սան Ստեֆանոյի պայմանագիրը առաջացրեց Ավստրո-Հունգարիայի և Մեծ Բրիտանիայի դժգոհությունը։ Ռուսական կայսրությունը պատերազմի սպառնալիքով ստիպված եղավ վերանայել Սան Ստեֆանոյի պայմանագիրը Բեռլինում։ 1878 հունիսին կնքվեց Բեռլինի պայմանագիրը, որով վերանայվեց Սան Ստեֆանոյի պայմանագիրը։ Բեռլինի պայմանագրով փոփոխությունների ենթարկվեին նաև հայերին վերաբերվող հոդվածները։ 16-րդ հոդվածի փոխարեն մտցվեց 61-րդ հոդվածը։ Այս հոդվածով ևս հայկական բնակավայրերում պետք է իրականացվեին բարեփոխումներ, բայց վեհաժողովին մասնակից բոլոր պետությունների վերահսկողությամբ։ Հայաստան անվանումը

փոխարինվեց «հայաբնակ մարզեր» անվանումով։ Ռուսական կայսրությունը Օսմանյան կայսրությանը բացի Կարինը և Բասենը, վերադարձնում էր Բայազետը և Ալաշկերտը։

Հայկական հարցի միջազգայնացումը առաջացրեց մեծ հիասթափություն հայկական միջավայրում։ Հարցի միջազգայնացումը ազդարարեց հայ ազատագրական պայքարի զինված փուլի սկզբնավորումը, որն էլ իր հերթին նպաստեց Օսմանյան կայսրությունում հակահայկական տրամադրությունների սրմանը, 1894-1896 թթ. համիդյան ջարդերի իրականացմանը։

2. Որո՞նք էին հայ իրականության մեջ ստեղծված քաղաքական կուսակցությունները։ Ընտրե՛ք և ներկայացրե՛ք այդ կուսակցություններից մեկի քաղաքական ծրագիրը։

Հայկական հարցի միջազգայնացումից հետո, հայկական միջավայրում 19-րդ դարի վերջին ձևավորվեցին երեք քաղաքական կուսակցություններ։ Առաջին հայ քաղաքական կուսակցությունը՝ Արմենական կուսակցությունը, ձևավորվեց Վանում 1885-ին։ Սոցիալ Դեմոկրատական Հնչակյան կուսակցությունը ձևավորվեց 1887-ին՝ Ժնևում, իսկ Հայ հեղափոխական դաշնակցությունը 1890-ին՝ Թիֆլիսում։

Արմենական կուսակցություն: Այս կուսակցության քաղաքական ծրագրում առաջին նպատակը արևմտահայության ազատագրության և Հայկական հարցի լուծմանը հասնելն էր։ Այս նպատակին հասնելու համար արմենականները կարևորում էին եվրոպական երկների օգնությունը և զինված պայքարը։ Արմենական կուսակցության ներկայացուցիչները համոզված էին, որ ժողովրդին զգուշորեն պետք է նախապատրաստել համաժողովրդական պայքարի։ Կուսակցությունը վտանգավոր էր համարում հայդուկային պայքարը։ Միայն Հայաստանի ամբողջական ազատագրումից հետո, ըստ կուսակցության ծրագրի, կարելի էր հասնել իրավահավասար հասարակության ձևավորմանը։

ԿԱՄ

Հնչակյան կուսակցություն: Այս քաղաքական կուսակցության ծրագրում առաջնային էր ամբողջ հայ ժողովրդի ճակատագիրը։ Հնչակյան կուսակցության քաղաքական ծրագիրը Հայկական հարցի լուծումը տեսնում էր Հայաստանի անջատ մասերի ազատագրությամբ և ամբողջ հայրենիքում պետականության ստեղծմամբ։ Սոցիալիզմի գաղափարների ազդեցությամբ հայրենիքում միասնական պետականության վերստեղծումից հետո պետք է ստեղծվեր արդար և իրավահավասար հասարակություն։ Այս ծրագրի իրականացման համար հնչակյանները ակտիվ գործունեություն էին ծավալում Արևմտյան Հայաստանի տարածքում և հայրենիքի ազատագրությունը պատկերացնում էին հայդուկային պայքարի միջոցով։

ԿԱՄ

Հայ հեղափոխական դաշնակցություն: Այս կուսակցությունը իր ծրագրում առաջնային հիմնախնդիր էր համարում Արևմտյան Հայաստանի ազատագրությունը։ Արևմտյան Հայաստանի ազատագրությունը Հայ հեղափոխական դաշնակցությունը պատկերացնում էր զինված պայքարի՝ հայդուկային շարժման, ապստամբական և ահաբեկչական գործողությունների միջոցով։

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԴԱՐԵՐՈՒՄ

ԹԵՄԱ 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (10 ՄԻԱՎՈՐ)

1. Ինչու՞ տեղի ունեցավ 1918 հայ-վրացական պատերազմը։ Ներկայացրե՛ք այդ պատերազմի հետևանքները։

1918-ին անկախացած Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության միջև պատերազմ տեղի ունեցավ տարածքային վեճերի պատճառով։ Վրաստանի Հանրապետությունը տարածքային հավակնություններ ուներ Լոռու (Բորչալուի), Ախալքալաքի (Ջավախք) գավառների նկատմամբ։

Այս հարցում երկու կողմերի վճռականության պատճառով անհնար եղավ խուսափել պատերազմից, որը տեղի ունեցավ 1918-ի դեկտեմբերին։ Պատերազմը տևեց քսան օր և ավարտվեց Հայաստանի հաղթանակով։ 1918 դեկտեմբերի 31-ին Անտանտի զինվորական ներկայացուցիչների միջնորդությամբ կնքվեց հայ-վրացական զինանադադար։

Զինադադարից հետո՝ 1919 հունվարին Թիֆլիսում տեղի ունեցավ հայ-վրացական խաղաղության խորհրդաժողով։ Ջավախքը հայտարավեց վիճելի տարածք, իսկ Լոռին «չեզոք գոտի»։ Վրացական կողմը վերաբացեց Հայաստան եկող երկաթուղային ուղիները, և երկու երկների միջև հաստատվեցին բարեկամական հարաբերություններ։

2. Ե՞րբ և ինչպե՞ս սկսվեց բոլշևիկների Մայիսյան ապստամբությունը։ Բացատրե՛ք Հայաստանի Հանրապետության կառավարության արձագանքն այս ապստամբությանը։

Մայիսյան բոլշևիկյան ապստամբությունը բռնկվեց 1920 մայիսի 1-ին՝ Աշխատավորների միջազգային օրը, Ալեքսանդրապոլում։ Ապստամբությունը բարձրացնելու առիթ դարձավ Ադրբեջանի խորհրդայնացումը, որը տեղի էր ունեցել 1920 ապրիլի 28-ին։ Ապստամբության հենց սկզբում ապստամբների կողմն անցան «Վարդան Զորավար» զրահագնացքի զինվորները՝ Սարգիս Մուսայելյանի գլխավորությամբ։ Արմենկոմի՝ Հայաստանի կոմունիստական կազմակերպության հետ համատեղ նիստերում որոշվեց ապստամբությունը շարունակել Ալքեսանդրապոլից և Ղազախից՝ ուղղություն վերցնելով դեպի Երևան։ Ապստամբները ստեղծեցին Ռազմահեղափոխական կոմիտե՝ Սարգիս Մուսայելյանի գլխավորությամբ։ Արդեն մայիսի 10-ին ՌՀԿ-ն հայտարարեց, որ երկրում իշխանությունը վերցրել է իր ձեռքը։

Մայիսյան ապստամբության հետևանքով Հայաստանի Հանրապետության վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը հրաժարական ներկայացրեց։ Նրան փոխարինեց Համո Օհանջանյանը։ Օհանջանյանի կառավարությունը սահմանեց խիստ պատիժներ։ Հանրապետության կառավարությունը սկզբում փորձեց բանակցել ապստամբների հետ, սակայն այդ բանակցությունները որևէ օգուտ չտվեցին։ Մայիսի 13-ին Օհանջանյանի կառավարությունը վերջնագիր ներկայացրեց Ալեքսանդրապոլի ապստամբներին։ Ժողովրդի կողմից աջակցություն չստանալով՝ ապստամբները ստիպված եղան անձնատուր լինել։ Բոլշևիկների մայիսյան ապստամբությունը Հայաստանում պարտություն կրեց։

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (12 ՄԻԱՎՈՐ)

Ուշադրությո՛ւն. Համաշխարհային պատմության բաժնում անհրաժեշտ է կատարել **երկու** առաջադրանք՝ պատասխանելով բոլոր հարցերին: Առանց շտապելու կարդացե՛ք և ուսումնասիրե՛ք տրված աղբյուրները: Պատասխանե՛ք հարցերին՝ հիմնավորելով ձեր պատասխանը աղբյուրներում առկա տեղեկույթով:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1 (6 ՄԻԱՎՈՐ)

ՆՈՐ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Աղբյուր Ա. Հատվածը Ֆրանսիական խորհրդարանի կողմից ընդունված «Մարդու և քաղաքացու իրավունքների» հռչակագրից է, որն հրապարակվել է 1789 թվականի օգոստոսի 26-ին:

Ֆրանսիացի ժողովրդի ներկայացուցիչները, ձևավորելով Ազգային ժողովը և համարելով, որ մարդու իրավունքների անտեսումը դժբախտությունների և կառավարությունների կոռուպցիայի[1] միակ պատճառն է, որոշեցին շարադրել Մարդու բնական, անօտարելի և սուրբ իրավունքների հանդիսավոր հռչակագիրը հետևյալ հոդվածներով՝

Հոդված 1. Մարդիկ ծնվում և մնում են ազատ, հավասար իրավունքներով: Սոցիալական տարբերությունները կարող են հիմնված լինել միայն ընդհանուր բարօրության վրա:

Հոդված 6. Օրենքը ընդհանուր կամքի արտահայտությունն է: Բոլոր քաղաքացիներն իրավունք ունեն անձամբ կամ իրենց ներկայացուցիչների միջոցով մասնակցելու դրա ստեղծմանը: Օրենքը բոլորի համար պետք է լինի նույնը՝ անկախ նրանից՝ պաշտպանում է, թե պատժում:

Հոդված 11. Մտքի և կարծիքի ազատ արտահայտումը մարդու ամենաթանկ իրավունքներից մեկն է: Հետևաբար, յուրաքանչյուր քաղաքացի ազատ է խոսելու, գրելու և տպագրելու՝ պատասխանատվության ենթարկվելով միայն օրենքով սահմանված դեպքերում այդ ազատության չարաշահման համար:

Աղբյուր Բ. Հատվածը անգլիացի հասարակական-քաղաքական գործիչ Թոմաս Փեյնի «Մարդու իրավունքները» քաղաքական տրակտատից[2] է, որը հրատակվել է 1791 թվականին:

Հին ռեժիմում[3] կառավարությունը իշխանությունը ստանձնում էր միայն ինքն իրեն ուռճացնելու համար, նոր ռեժիմում կառավարությունը պետք է վերածվի հասարակության պատվիրակության: Այս երկու՝ հին և նոր ռեժիմների միջև առաջին հիմնական տարբերությունն այն է, որ հին ռեժիմը ամբողջությամբ կամ մասամբ ժառանգական էր, իսկ նորը լիովին ներկայացուցչական է:

ժառանգական կառավարման մոդելը իր բնույթով բռնապետություն էր: Ժառանգել իշխանությունը նշանակում էր ժառանգել ժողովրդին, կարծես այդ ժողովուրդը կենդանական հոտ էր: Ներկայացուցչական կառավարման մոդելը իր հիմքում դնում է հասարակությունը և քաղաքակրթությունը, իսկ իր համար որպես ուղենիշ վերցնում է բանականությունը և փորձը:

Ներկայացուցչական ժողովրդավարական կառավարման մոդել հաստատելով՝ մենք կհասնենք կառավարման այնպիսի համակարգի, որը կարող է համախմբել հասարակության բոլոր շերտերը և նրանց շահերը: Ներկայացուցչական կառավարման մոդելը պետք է դիտարկել միայն Ազգային համագործակցության՝ խորհրդարանի ձևով: Այն պետք է կառուցվի այնպես, որ նրա մաս կազմող կառույցները չտուժեն ամեն մի ցնցումից:

---

[1] Կոռուպցիա- կաշառակերություն:

[2] Տրակտատ-քաղաքական ակնարկ:

[3] Հին ռեժիմ-Ֆրանսիայի նախահեղափոխական կառավարման համակարգը:

Հարց 1. Օգտվելով Աղբյուր Ա-ի և Բ-ի տեղեկություններից և ձեր գիտելիքներից՝ բացատրե՛ք, թե ինչու տեղի ունեցավ ֆրանսիական հեղափոխությունը և ինչի համար էին պայքարում ֆրանսիացի հեղափոխականները:

Աշակերտը պետք է դիտարկի 18-րդ դարում տարածված Լուսավորական գաղափարները և Ֆրանսիային ներքին քաղաքական տնտեսական դրությունը, որոնք քննարկվում են Աղբյուր Ա-ում և Աղբյուր Բ-ում: Հատկապես պետք է նկատելի լինեն լուսավորականության գաղափարները, որոնք արտացոլված են երկու աղբյուրներում: Պատասխանի երկրորդ մասը պետք է ներկայացվի հենց լուսավորականության առաջ քաշած գաղափարների հիման վրա:

1789 թվականին Ֆրանսիայում սկսվեց Ֆրանսիական Մեծ հեղափոխությունը, որի համար կային մի քանի նախադրյալներ:

Առաջին

Ֆրանսիան մինչ հեղափոխությունը գյուղատնտեսական երկիր էր: Ֆրանսիայում առկա էին ավատատիրական վերապրուկներ, որոնք խոչընդոտում էին երկրի տնտեսության զարգացմանը և արդյունաբերականացմանը: Գյուղացիներն անձնապես ազատ էին, բայց վճարում էին շատ հարկեր: Գյուղացիներն ու ձեռներեցներն էին ստեղծում նյութական բարիքները, բայց իրավունք չունեին մասնակցել երկրի կառավարմանը (Տե՛ս **Աղբյուր Ա՝** «*մարդու իրավունքների անտեսումը դժբախտությունների և կառավարությունների կոռուպցիայի միակ պատճառն է:*»): Հասարակության մեջ բարձր դիրքեր զբաղեցնող առաջին և երկրորդ դասերը՝ ազնվականները և հոգևորականները ամեն ինչ անում էին իրենց արտոնությունները պահպանելու համար: Նրանք չէին վճարում հարկեր, ապրում էին հարուստ և անհոգ կյանքով՝ դատարկելով պետական գանձարանը: Տնտեսության մեջ մենաշնորհները պատկանում էին այս արտոնյալ դասերին:

Երկրորդ

18-րդ դարի ընթացքում Եվրոպայում տարածված էին Լուսավորականաության գաղափարները: Այս գաղափարախոսությունը քննադատում էր հին կարգերը, կրոնական մոլեռանդությունը և միապետական կառավարման համակարգը (Տե՛ս **Աղբյուր Բ** «*ժառանգական կառավարման մոդելը իր բնույթով բռնապետություն էր: Ժառանգել իշխանությունը նշանակում էր ժառանգել ժողովրդին, կարծես այդ ժողովուրդը կենդանական հոտ էր:*»): Այս գաղափարախոսությունները Եվրոպայում առաջին անգամ քննարկման առարկա դարձրին մարդու բնական իրավունքները (Տե՛ս **Աղբյուր Ա** «*Մարդիկ ծնվում և մնում են ազատ, հավասար իրավունքներով*»): Ըստ լուսավորականների՝ մարդը ի ծնե ազատ էր, կարող էր մասնակցել երկրի կառավարմանը (Տե՛ս **Աղբյուր Բ** «*Ներկայացուցչական ժողովրդավարական կառավարման մոդել հաստատելով՝ մենք կհասնենք կառավարման այնպիսի համակարգի, որը կարող է համախմբել հասարակության բոլոր շերտերը և նրանց շահերը*»), ազատ արտահայտել իր կամքը և դրա համար պատասխանատու էր միայն օրենքի առջև: Լուսավորականությունը քննարկում էր նաև իդեալական պետական կառավարման համակարգը՝ տալով իշխանության երեք հատվածների բաժանում՝ օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի: Լուսավորականները նախընտրությունը տալիս էին հանրապետությանը»

Հիմնվելով վերոհիշյալ նախադրյալների և Աղբյուր Ա-ում և Աղբյուր Բ-ում քննարկվող գաղափարների վրա՝ պետք է նշել, որ ֆրանսիացի հեղափոխականները պայքարում էին լուսավորականության գաղափարների իրականացման համար, այսինքն՝ մարդու բնական իրավունքների, միապետության տապալման և հանրապետական կառավարման համակարգի հաստատման համար:

Հարց 2. Օգտվելով ձեր գիտելիքներից՝ Ֆրանսիայի օրինակով ներկայացրե՛ք և բացատրե՛ք, թե աղբյուրներում քննարկվող գաղափարները ինչպես են կյանքի կոչվել:

Աշակերտը պետք է քննարկի Աղբյուր Ա-ում և Աղբյուր Բ-ում ներկայացվող գաղափարները՝ համադրելով իր փաստական գիտելիքի հետ: Այստեղ պետք է դիտարկվի Ֆրանսիական հեղափոխության ընթացքը:

Լուսավորական գաղափարների կյանքի կոչումը Ֆրանսիայում տեղի ունեցավ հեղափոխական ճանապարհով: Հեղափոխության համար առիթ դարձավ Լուի XVI արքայի կողմից Գլխավոր շտատների հրավիրումը և հարկերի բարձրացումը, որին ընդդիմացան ձեռներեցները: Արքան ստացավ մերժում, և Վերսալում 1789-ի մայիսին գումարված Գլխավոր շտատները դարձավ Ֆրանսիական Մեծ հեղափոխության սկզբնավորվման պատճառ: Լուի XVI-ը փորձեց փակել Գլխավոր շտատները, բայց ընդդիմադիրները իրենց հռչակեցին **Ազգային ժողով**, որը հայտարարեց, որ այդ մարմինն է արտահայատում ֆրանսիացիների հավաքական կամքը (Տե՛ս **Աղբյուր Բ՝** «*Ներկայացուցչական ժողովրդավարական կառավարման մոդել հաստատելով՝ մենք կհասնենք կառավարման այնպիսի համակարգի, որը կարող է համախմբել հասարակության բոլոր շերտերը և նրանց շահերը: Ներկայացուցչական կառավարման մոդելը պետք է դիտարկել միայն Ազգային համագործակցության՝ խորհրդարանի ձևով:*»): Սա դարձավ աղբյուրներում բերված գաղափարների իրականացման ***առաջին քայլը***: Այս փաստը չընդունվեց Հին ռեժիմի ներկայացուցիչների կողմից: Ընդդիմադիրները հեղափոխության հետագա ընթացքում գրավեցին Բաստիլի ամրոցը՝ 1789 հուլիսի 14-ին, որը հին կարգերի խորհրդանիշն էր: Այս իրադարձությունների հետո, Ֆրանսիայում ստեղծվեց Ազգային գվարդիա, որը շարունակեց Ֆրանսիական մեծ հեղափոխության ընթացքը:

Լուսավորականության գաղափարների իրականացման ***երկրորդ քայլը*** դարձավ «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի» ընդունումը, որը դնում էր ազգի հավաքական կամքի, իրավահավասար պետության ստեղծման գաղափարները: Իրավահավասար պետության ստեղծման ***երրորդ քայլը*** դարձավ 1791-ին Ֆրանսիայի Սահմանադրության ընդունումը, որով Ֆրանսիան դարձավ սահմանադրական միապետություն: Արքան պահպանեց գործադիր իշխանության գործառույթները, բայց նրա իրավունքները սահմանափակվեցին:

Ֆրանսիայում իրավահավասար պետության ստեղծման ***չորրորդ քայլը*** դարձավ 1792-ի սեպտեմբերին հանրապետության հռչակումը, որի համար առիթ դարձան արքայի և ազնվականության կազմակերպած խռովությունները: Արքան ցանկանում էր Ավստրիայի և Պրուսիայի օգնությամբ վերականգնել իր դիրքերը, սակայն պարտվեց: Հանրապետության հռչակմամբ մտցվեց ընդհանուր ընտրական իրավունք, ըստ որի՝ արական սեռի բոլոր չափահաս ներկայացուցիչները առանց գույքային ցենզի ունեին ընտրելու և ընտրվելու իրավունք (Տե՛ս **Աղբյուր Ա՝** «*Օրենքը ընդհանուր կամքի արտահայտությունն է: Բոլոր քաղաքացիներն իրավունք ունեն անձամբ կամ իրենց ներկայացուցիչների միջոցով մասնակցելու դրա ստեղծմանը:*»):

Նշված քայլերը, սակայն, ֆրանսիական հասարակությունը չդրաձրին մեկ միասնական ամբողջություն, ինչի արդյունքում երկրում ակտիվացան միապետական տրամադրությունները: Իշխանությունը կարողացան գրավել ծայրահեղ հեղափոխական ուժ համարվող յակոբինյանները: Յակոբինյանների իշխանության տապալումից հետո, իշխանությունը իր ձեռքը վերցրեց երիտասարդ գեներալ Նապլեոն Բոնապարտը՝ հաստատելով «ուժեղ ձեռքի» իշխանություն: Չնայած Ֆրանսիական հեղափոխության վերջնական ընթացքին, լուսավորականության գաղափարների հաստատումը դարձավ եվրոպական հասարակական մտքի բաղկացուցիչ մասը և ամբողջ Եվրոպայում հեղափոխությունների սկզբնավորման պատճառ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2 (6 ՄԻԱՎՈՐ)

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Աղբյուր Ա. Հատվածը Ունիսթոն Չերչիլի Ֆուլտոնյան ելույթին տրված պատասխանն է ԽՍՀՄ ղեկավար Իոսիֆ Ստալինի կողմից, որը հրատարակվել է «Պրավդա» թերթում 1946 թ. մարտ 14-ին:

Պարոն Չերչիլն այժմ կանգնած է պատերազմ հրահրողի դիրքում: Եվ պարոն Չերչիլն այստեղ միայնակ չէ: Նա կողմնակիցներ ունի ոչ միայն Անգլիայում, այլև Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Հնարավոր է, որ որոշ շրջանակներ փորձում են մոռացության մատնել խորհրդային ժողովրդի զոհաբերությունները, որոնք ապահովեցին Եվրոպայի ազատագրումը Հիտլերի տիրապետությունից, բայց Խորհրդային Միությունը չի կարող մոռանալ դրանք:

Չպետք է մոռանալ հետևյալ հանգամանքը՝ գերմանացիները Արևելյան Եվրոպայի տարածքով ներխուժեցին ԽՍՀՄ: Նրանք կարողացան ներխուժել, քանի որ այդ երկրներում կային այն ժամանակ Խորհրդային Միության դեմ թշնամաբար տրամադրված կառավարություններ: Հետևաբար, կարելի է հարցնել, թե ինչը կարող է զարմանալի լինել այն փաստում, որ Խորհրդային Միությունը, ցանկանալով ապահովել իր անվտանգությունը ապագայի համար, փորձում է հասնել նրան, որ այդ երկրները ունենան կառավարություններ, որոնց հարաբերությունները Խորհրդային Միության հետ կլինեն չեզոք:

Պարոն Չերչիլը նաև պնդում է, որ «Վարշավան, Բեռլինը, Պրահան, Վիեննան, Բուդապեշտը և նրանց տարածքների բնակչությունը խորհրդային ազդեցության ոլորտում են, և բոլորն այս կամ այն կերպ անմիջապես ենթակա են Մոսկվային»: Մեծ ջանք չի պահանջվում ցույց տալու համար, որ պարոն Չերչիլն այստեղ անամոթաբար զրպարտում է թե՛ Մոսկվային, թե՛ ԽՍՀՄ-ին հարևան պետություններին:

Աղբյուր Բ. Ստորև տրված ծաղրանկարը տպագրվել է 1968 թվականին:



Հարց 1. Օգտագործելով Աղբյուր Ա-ի տեղեկությունները և ձեր գիտելիքները՝ բացատրե՛ք, թե ինչու և ինչպես ստեղծվեց սոցիալիստական ճամբարը: Տնտեսական և ռազմաքաղաքական ո՞ր կառույցներում միավորվեցին սոցիալիստական ճամբարի երկները:

Աշակերտը պետք է դիտարկի Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը և Սառը պատերազմի սկզբնավորման ժամանակաշրջանը՝ ուշադրություն դարձնելով երկբևեռ աշխարհի ձևավորման ընթացքին:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո, չնայած դաշնակիցների պայմանավորվածություններին, աշխարհը չկարողացավ միավորվել համամարդկային արժեքների շուրջ: Պատերազմի ավարտական փուլում խորհրդային ազդեցության գոտում հայտվեցին խորհրդային բանակի կողմից գրավված Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներ՝ Ռումինիան, Բուլղարիան, Լեհաստանը, Չեխոսլավակիան, Հունգարիան, Հարավսլավիան, Արևելյան Գերմանիան (Տե՛ս **Աղբյուր Ա՝** «*որոշ շրջանակներ փորձում են մոռացության մատնել խորհրդային ժողովրդի զոհաբերությունները, որոնք ապահովեցին Եվրոպայի ազատագրումը Հիտլերի տիրապետությունից, բայց Խորհրդային Միությունը չի կարող մոռանալ դրանք*»): ԽՍՀՄ կենտրոն Մոսկվայի ճնշման ներքո այս երկներում հաստատվեցին սոցիալիստական կառավարման համակարգեր (Տե՛ս **Աղբյուր Ա՝** «*Պարոն Չերչիլը նաև պնդում է, որ «Վարշավան, Բեռլինը, Պրահան, Վիեննան, Բուդապեշտը և նրանց տարածքների բնակչությունը խորհրդային ազդեցության ոլորտում են, և բոլորն այս կամ այն կերպ անմիջապես ենթակա են Մոսկվային»: Մեծ ջանք չի պահանջվում ցույց տալու համար, որ պարոն Չերչիլն այստեղ անամոթաբար զրպարտում է թե՛ Մոսկվային, թե՛ ԽՍՀՄ-ին հարևան պետություններին:*»):

Այս երկրները ստացան «սոցիալիստական ճամբար» համընդհանուր անվանումը: Ստացվում է, որ «սոցիալիստական ճամբարը» ձևավորվեց Խորհրդային Միության հետպատերազմյան ժամանակաշրջանի աշխարհակալական քաղաքականության իրականացման արդյունքում: Այս աշխարհակալական ձգտումների կանխարգելման և զսպան հայտարարություններով հանդես եկան արևմտյան աշխարհի ներկայացուցիչները՝ Միացյալ թագավորության վարչապետ Ուինսթոն Չերչիլը և ԱՄՆ նախագահ Հարի Թրումանը (Տե՛ս **Աղբյուր Ա՝** «Պարոն Չերչիլն այժմ կանգնած է պատերազմ հրահրողի դիրքում: Եվ պարոն Չերչիլն այստեղ միայնակ չէ: Նա կողմնակիցներ ունի ոչ միայն Անգլիայում, այլև Ամերիկայի Միացյալ Նահանգներում»):

Երկրորդ աշխարհամարտի արդյունքում սկսվեց երկբևեռ աշխարհի ձևավորման ընթացքը: Առաջին բևեռը արևմտյան ժողովրդավարական երկրներն էին՝ ԱՄՆ գլխավորությամբ, իսկ երկրորդը՝ «սոցիալիստական ճամբարի» երկրները՝ ԽՍՀՄ գլխավորությամբ: Երկբևեռ աշխարհի ձևավորման գործընթացին նպատեցին ***տնտեսական և ռազմական*** կառույցների ձևավորումը:

Առաջինը տեղի ունեցավ տնտեսական կառույցների ձևավորումը: ԱՄՆ նախագահ Հարի Թրումանը խոստացավ տնտեսապես օգնել Արևմտյան Եվրոպայի այն երկներին, որոնք անմիջականորեն գտնվում էին խորհրդային ներխուժման վտանգի տակ: 1947-ին հաստատվեց ամերիկյան տնտեսական օգնության «Մարշալի պլանը», որը ֆինանսական միջոցներ էր տրամադրելու Արևմտյան Եվրոպայում պատերազմից տուժած երկներին տնտեսության վերակագնելու համար: Հակադրվելով «Մարշալի պլանին»՝ 1949-ին ԽՍՀՄ-ը ձևավորեց Տնտեսական փոխօգնության խորհուրդը, որի մեջ մտան Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրները:

Երկբևեռ աշխարհի ձևավորումն ավարտվեց երկու ռազմական կառույցների ձևավորմամբ: Առաջինը ձևավորվեց ՆԱՏՕ-ն՝ Հյուսիսատլանտյան դաշինքը, որը ԱՄՆ-ի գլխավորությամբ 1949-ին միավորեց Հյուսիսային և Արևմտյան Եվրոպայի երկներին: ԽՍՀՄ գլխավորության 1955-ին ի հայտ եկավ Վարշավյան դաշինքը, որը միավորում էր Արևելյան Եվրոպայի «սոցիալիստական ճամբարի» երկրները:

Հարց 2. Օգտվելով Աղբյուր Բ-ից և ձեր գիտելիքներից՝ ներկայացրեք և բացատրեք, թե որքանով էին անկախ Արևելյան Եվրոպայի երկրները։

Ծաղրանակարում պատկերված մարդը խորհրդանշում է ԽՍՀՄ-ը, որը փորձում է «սոցիալիզմի» շինանյութով իրար կապել Արևելյան Եվրոպայի երկները։ Ծաղրանկարում տեսանելի են Արևելյան Եվրոպայի անկախական ձգտումները, որոնք բնորոշ էին հատկապես Չեխոսլովակիային, Լեհաստանին և Հունգարիային։

Արևելյան Եվրոպայում «սոցիալիստական ճամբարի» ձևավորումից հետո տեղի պետությունները մեծ հույսեր էին կապում՝ ակնկալելով բնակչության կենսամակարդակի բարձրացում, իրական ժողովրդավարության հաստատում, մշակութային հարատև զարգացում։ Արևելյան Եվրոպայի երկների այս սպասելիքները, բնականաբար, չիրականացան, քանի որ այս երկներում, ինչպես ԽՍՀՄ-ում հաստատվեցին ավտորիտար, միակուսակցական կառավարման համակարգեր։ Բացի այդ՝ Արևելյան Եվրոպայի և Արևմտյան Եվրոպայի երկների միջև տնտեսական զարգացման արմատական տարբերությունները ցայտուն էին։

Արդեն 1950-ական թթ. Ստալինի անձի պաշտանմունքի դատապարտմամբ և «ձնահալի» ժամանակաշրջանում աճեցին Արևելյան Եվրոպայի երկների դժգոհությունները սոցիալիստական համակարգից։ Հատկապես Հունգարիայում և Չեխիայում տեղի ունեցան ժողովրդական հուզումներ։

1956-ին Հունգարիայի կառավարությունը փորձեց բարեփոխումներ կատարել երկրում՝ հայտարարելով նաև, որ Հունգարիան դուրս է գալիս Վարշավյան դաշինքի ռազմական կառույցից։ Հունգարական ապստամբությունը ճնշվեց խորհրդային ռազմական ուժով։ Խորհրդային զորքերը մուտք գործեցին Բուդապեշտ և ճնշեցին ժողովրդավարական ապստամբությունը։

Նույն իրադարձությունները տեղի ունեցան Չեխոսլովակիայում։ Լեոնիդ Բրեժնևի «լճացման» շրջանում արգելվեց բարեփոխումների իրականացումը այս երկրում։ 1968-ին Վարշավյան դաշինքի զորքերը մուտք գործեցին մայրաքաղաք Պրահա՝ ճնշելով չեխական ապստամբությունը։ Այս ապստամբությունների ճնշումից հետո ԽՍՀՄ-ը ուժեղացրեց իր վերահսկողությունը Արևելյան Եվրոպայի երկների նկատմամբ։

Վերոնշյալից կարող են եզրակացնել, որ «սոցիալիստական ճամբարը» ստեղծվել էր Խորհրդային ռազմական մեքենայի միջոցով։ Արևելյան Եվրոպայի երկրները չունեին իրական անկախություն։ Սոցիալիստական վարչակարգը այստեղ գոյատևում էր խորհրդային զինված ուժերի միջոցով։